


Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR

87 SALISBURY STREET
WORCESTER, MASS. 01609
TEL. 756-2931

Փետրուար 10, 1971

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,
Նիւ Եորք, Ն.Ե.

Սիրելի Սրբազան,

Համաձայն թիւ 266 շրջաբերականին, ներփակ կը գտնէք Առաջնորդարանէն դրկուած տպագրեալ տեղեկագիրը, ուր տրուած են Թեմական Պատգամաւորներու անուան ու հասցէն եւ եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու առեւտրային տնտեսութեան անուան, հասցէն եւ հեռաձայնի թիւը, ինչպէս նաեւ տպագրեալ պրակ մը, ուր կան Տարեկան Միական Ժողովին ներկայացուած հովուի, ծխական խորհուրդի վարչական-եւ տնտեսական ու զանազան կազմակերպութեանց տեղեկագիրները, եւ 1971-ի պիւտճէն:

Վերոյիշեալներու կարգին կը գտնէք նաեւ Միական Ժողովի առեւտրային տնտեսութեան եւ պաշտօնական թուղթի մը վրայ արձանագրուած ընտրութեանց արդիւնքը, որուն համաձայն ծխական Ժողովի անդամ ընտրուած են ձան Թորգոմանեան, Զաւէն Գապարեան, Ղեւոնդ Թադեւոսեան, Վահան Արթուրեան եւ Արտէն Խարոսեան, որոնց վաւերացումը կը խնդրենք Ձերը Սրբազանութենէն:

Մաղթելով յաջողութիւն, մնամ

Եղբայրական սիրոյ ողջունիւ
աղօթակից

Միւսէլ Գրիգորեան

Միւսէլ Ս. Վրդ. Կրճիկեան
Հոգեւոր Հովիւ